

819

203.G
U - 50

El

all others

9 9 9

203-6

Ա-50

Հ

ՏՕՆ ԱՑՈՅՑ

ՆԱԽԱՊԻՄ ԿԱՐԳԵԱԼ ԵՒ ՍԱՀՄԱՆԵԱԼ ՄՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ
ՊԱՐԹԵԻԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԱՅՈՑ ԸՆՏ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՄՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

ԵՒ ԶԿՆԻ ՅՈՒՆԱՀԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՇԽԱՏԱ-
ՄԻՐՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ՍԻՄՔՕՆՆ ՄՐԲԱՋԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ
ՅԵՐԿՈՒՄ ՀԱՏՈՐՄ ԲԱԺԱՆԵԱԼ.

2001

ԵՐԵՐԵՄ ՄՊԱՊԵՐ-ԵՒ-Ն

Ի ՑՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱԾՆԻ

4887-ՈՅԼԶ

23808

四

Ա. առաջին մեջ կայտապահ օրհնեալ որդիւր ու բնոյն
Գլուխուր կ լուսաւ ու շնորհ մերոյ, և շնորհածին պատահար Մօր մերոյ
հասաւույ այնոյ Ա. ինքույս էջմիածնին ։ Եւ ինը յառաջաբանուն մեջ ն
այս գլուխուր ու կոչի Տօնացոյց ։

Յայտնի իսկ է սիրելեացդ իմոց. զի ըստ սրբոյն
Ներսիսի Շնորհալւոյն, ի ծովանման և յալէշատ
նցաղոջո՞ւ՝ իբր ամրակառոյց և անքեկանելի նաւ իմն է
թուղիկէ եկեղեցի սուրբ. յոր հաւատով ապաւինեալ-
ո՞ւ անվնաս հասանեմք յանքոյթ և ի խաղաղ նաւահան-
ստն յաւիտենական:

Այլև յամենակարօտ և յամենայնի պակասաւոր վայ-
րոջա՝ է գանձարան և շտեմարան հոգեսոր՝ անսպառելի
և ամենառատ բարեացն Աստուծոյ. զորս վայելեմք հա-
ւատացեալքո ի կեանս յայս ըստ մարմնոյ՝ երեելապէս,
և ըստ հոգւոյ՝ աներեռւթապէս։ Իսկ ի հանդերձեալն՝
ըստ երկուցն ես. ըստ Պօղոսի թէ՝ այժմ տեսանեմք ընդ-
հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման։

Արդ՝ այսր եկեղեցւոյ տէր և գլուխ՝ է Տէրն մեր Յիսուս
Քրիստոս. զոր ստանալով արեամբն իւրով՝ սեպհականեաց
ինքեան. և կացոյց զսա փառաւոր եկեղեցի, զի մը ունիցի
ինչ արատ կամ աղտեղութիւն ըստ սրբոյն Պօղոսի. Եւ
այսր եկեղեցւոյ՝ կարգաւորիչ՝ Հոգաբարձու և գանձա-
պետ՝ է Հոգին սուրբ. որ ի սմանէ ծնեալ զաւակացն՝
կարգէ զոմանս առաքեալս. զոմանս մարգարէս. զոմանս
Հովիւս և վարդապետս. և զոմանս յայլ ինչ կոչմունս
ըստ արժանաւորութեանն՝ (ըստ նոյնոյ առաքելոյն). առ



676-534

ի հաստատութիւն սրբոց, ի գործ պաշտաման, ի շինուած
մարմնոյն Քրիստոսի, որ է եկեղեցի:

Ուրեմն՝ ամենայն սուրբք են իբր գործակալք՝ կառա-
վարիչք՝ և պաշտօնատարք յեկեղեցւոջ՝ կարգեցեալք ի
Հոգւոյն սրբոյ. և իբրև միջնորդք գլխոյն Քրիստոսի և
յետին անդամոց հաւատացելոց: Այլև՝ ունողք փականաց
բանալոյ և փակելոյ, մատակարարք և սեղանաւորիչք
գանձուց աստուածայինոց և պէս պէս շնորհաց նորին:
Էստ բանին Քրիստոսի թէ՝ զոր մի անդամ կապիցէք,
եղիցի կապեալ և զոր արձակիցէք, եղիցի արձակեալ:

Եւ դարձեալ թէ՝ եթէ ումեք թողուցուք, թողեալ լիցի:
Առ մարգարէն ասէ, կացուցի զձեզ խլել և տնկել:
Շարականն ասէ վասն Լուսաւորչին մերոյ. Այսօր զանա-
պական Հոգւոյն պարգես բաշխողն որդւացս Յորդումայ.
Վասն Հռիփսիմեանց ասէ. քանզի՝ բաշխեն զբժշկու-
թիւն հոգւոց և մարմնոց, և զպարգես երկնաւորս սի-
րողաց իւրեանց: Վասն մարտիրոսաց ասէ. իշխանու-
թիւն ունին ի Հոգւոյն սրբոյ առաջնորդել մեղ յերուսա-
ղէմն վերին: Դարձեալ թէ՝ առիք իշխանութիւն բարեխօ-
սութեան: Եւ վասն հրեշտակաց ասէ. որ անձառ պար-
գեօք քե զառաջինոն լնուս. և ի ձեռն նոցա որ ի խո-
նարհ քան զնոսա, և այլք բազումք այսպիսիք:

Վասն այսորիկ և կարգեցան տօնք սրբոցն յեկեղեցւոջ,
յատկացան աւուրք իւրաքանչիւրոցն. ներբողեցան երգօք՝
և փառաւորեցան զանազան ասացուածովք. զի մեք յե-
տինքս և կարօտքս, յիւրաքանչիւրում աւուրն զկար-
գեցեալ սուրբսն տօնիցեմք. այսինքն՝ շնորհակալութեամք
փառաւորիցեմք վասն արարեալ բարերարութեանցն, և

աղաչիցեմք, զի և Ասլինիցին բարերարք, այսինքն՝ լինի-
ցին միջնորդք խաղաղութեան առ Աստուած. բացցեն մեզ
զդուուն ողորմութեան. Եղիցին պահապանք հոգւոց և
մարմնոց մերոց. առաջնորդեսցեն մեզ ի վերին և յանդ-
րանկաց եկեղեցին. և մասնակիցս արացեն այնց բազ-
մապատիկ բարեացն զորս ինքեանք վայելեն:

Այս է բոլոր եկեղեցւոյ և տօնակատարութեանս մերոյ
իսկ գիտաւորութիւնն: Քանզի բանալի ողորմութեան Աս-
տուծոյ՝ որպէս թէ՝ յատկապէս ի ձեռս յիւրաքանչիւ-
րումն աւուր տօնեցեալ Արբոցն է:

Արդ՝ այսց երանելեաց սրբաց զտօնսն, և զաւուրս նո-
ցին տօնից ցուցանօղն՝ և տօնարանն, է Գիրքս այս, որ
Տօնացոյց իսկ կոչի. քանզի՝ սա ցուցանէ զտօնելիս իւ-
րաքանչիւրոց աւուրց: Այլ սակայն՝ տօնք սրբոցն, որք իբր
անշարժապէս ի նմին տեղւոջ եղեալք են՝ ի Տօնացու-
ցին մերում, ոչ կարեն յամենայնում տարւոջ ի նմին
տեղւոջն տօնիլ, որպէս հաւաստի է:

Քանզի՝ աւուրք և ամիսք ամացն, և շարժական միջոց-
քըն՝ ըստ Տարեգրացն շարժին և պարաբերին. իսկ Տա-
րեգիրքն ոչ միապէս և նոյնաշաւիղ ընթանան, այլ յա-
տուկ յատուկ և զանազան շաւզօք, որպէս յայտնի իսկ է
ամենից: Վասն այսորիկ անշնարին է Տօնացուցին մերոյ
միակերպ դրմամքն ընդ զանազանակերպ շաւիղս իւրա-
քանչիւր գրոցն վարիլ:

Քանզի յերեսուն և վեց գիրս մեր ոչ զտանի երբէք
համաձայնութիւն մի՝ որով թէւ ամենեքեան ոչ, գոնէ՝
երկուք կամ երեքն միակերպ ընթանայցեն ի սկզբանէ
տարւոյն մինչեւ ի վերջն. որք ոչ ստկաւ ի զարմացումն

ԹՃԵՆ զՆՐԲԱՎՔԸ նԿԱՄՈՂՄՆ: ՓԱՆՂԲ՝ ոՄԱՆՔ ԵԹԵ յՈՒՐԵՔ
ուրեք յամնաթիւսն համաձայնին, ի պատկեր աւուրսն
զՄՆԱՂԱՆԻՆ. և այլք եթե ի տեղիս տեղիս ի պատկեր
աւուրսն նոյնանան, յաւուր ձայնսն այլայլին: Ա.յԼՔ եթե
ուրեք յաւուր ձայնսն միաձայնին, ի տօնսն այլափոխին:
Եւ այլք եթե ուրեք ի տօնսն նմանին, ի միջոցսն այլայ-
լին: Եւ այլք եթե ոմամբք միջոցիւք համաձայնին, հար-
ցիւք տարածայնին: Ա.յԼՔ՝ հարցիւք մարտիրոսաց եթե
նոյնանան, ապաշխարութեան հարցիւք այլայլին: Եւ
ոմանց ի համաձայնին յուրեք սոքօք, կիւրակէից հարցքն
այլայլին: Եւ թէ հարցքն նոյնանան, համբարձիք յարու-
թեան փոփոխին: Եւ այլք այսպիսիք շատք, որք յայտնա-
պէս ցուցանին ի յերկրորդ հատորոջն Տօնացուցիս:
Վասն այսորիկ ասացաք անհնարին գոլ Տօնացուցին մերոյ
միակերպ գրմամբն ի զանաղանակերպ Տարեգիրսն ի կիր
արկանիլ:

Որ և յայտմանէ յառաջանան բաղմակերպ և անհամա-
ձայն տօնակատարութիւնք յեկեղեցիս մեր յամենայն
ամի: Փանղի՝ մինչ շատք ի տօնիցն ոչ կարեն ի յեղեալ
տեղոջն տօնիլ միշտ, վասնորոյ՝ ոմանք զայս տօն՝ յայս
ինչ օր տօնեն, և ոմանք յայլ օր: Ոմանք զայս ինչ տօն՝
միայն տօնեն և կամ ընդ այլում, իսկ ոմանք զնոյնս ընդ
այլում և կամ միայն. և տօնեցեալքն ևս աննմանք իրե-
րաց՝ անուամբ և երգօք. որ է անտեղի իմն:

Փանղի՝ բոլոր եկեղեցիս Հայաստանեայց իբր մի անձն
և մի մարմին գոլով և միաբերան զմի և զնոյն տօն կա-
տարելով, յուսայ միջնորդութեամբ տօնեցելոցն ընդունիլ
յԱստուծոյ ղինդրելին, որպէս ասացաւ. զոր և ամէնայն

երգք և ասացուածք աւուրն վկայեն: Զի յամենայն եր-
գըս մեր յաճախապէս ասեմք թէ՝ և ես միաբան՝: Եւ թէ՝
ամենեքեան միաբտնութեամբ զտէր աղա՛: Եւ թէ՝ այսօր
համաձայնեալ տօնեմք: Եւ այլք այսպիսիք բազումք: Ապա
ուրեմն՝ պարտիմք և ըստ ասացելոց՝ զմի և զնոյն տօնս
տօնել համաձայնութեամբ. և ոչ ի բազումն բաժանել՝
ոմանք զՊետրոս. և այլք զՊրիգոր, և այլք զայլս ոմանս:
Զայսքանս առիթ տալով նրբամիտ քննողացդ, բաւ համա-
րեսցուք որքան առ այս:

Ա.յլ այժմ որովհետեւ նոյն իսկական տէրն և գլուխն
մեր Քրիստոս՝ զիս անարժանս կացոյց գէտ և սպասաւոր
եկեղեցւոյ իւրոյ, ոչ կարացի զանց առնել զայսու. մա-
նաւանդ անկնածելով ի բանէն թէ՝ որ գիտիցէ զբարին՝ և
ոչ առնիցէ, մեղք են նմա: Վասնորոյ հարկ յանձին կա-
լայ հոգալ և բառնալ զայլեայլ տօնակատարութիւնս
զայս յեկեղեցւոյս մերմէ. զոր և հոգացաք իսկ օժանդա-
կութեամբն Աստուծոյ որպէս տեսանէք:

Փանղի՝ զՅօնացոյցս մեր յերկուս հատորս բաժանեցաք.
յտուաջին հատորոջն եղաք զամենայն տօնսն, զտէրունա-
կանս, զսրբոցն, և զպահսն հանդերձ պատճէլուքն իւրեանց,
որպէս յառաջն էր: Իսկ ի յերկրորդ հատորոջն՝ յօրինե-
ցաք զերեսուն և վեց խորանս ի վերայ երեսուն և վեց
գրոցն մերոց. որպէս զի՝ իւրաքանչիւր Տարեգրոյ խորան՝
զտօնսն, զմիջոցսն, զպահսն, և զայլս որպիսութիւնս իւ-
րոյ տարւոյն, հանդերձ ամսական թուովք և օրական
ձայնիւք անտարակոյս ցուցանիցէ տօնողացդ. զի մի տա-
րակուսիցիք թէ՝ այս միջոցս քանի՛ շաբաթ է. և կամ
քանի՛ օր. կամ զտօնսն սրպէս. և երբ պարտիմք տօնել.

կամ զհարցն՝ զթին ասել. և կամ աւուր ձայնն՝ զի՞նչ. այլ ըստ եղելոցն՝ զամենայն գտեալ պարագայիւքն՝ համաձայն և անտարակոյս տօնիցէք: Որև այս եղեւ մանաւանդապէս նախկին և հարկաւոր պատճառ յոդնաջան աշխատութեանս մերոյ:

Եւ երկրորդապէս պատճառն, զի ոմանք գլխաւոր տօնք առաջնոց լուսաւորչացն մերոց և բազմերախտից հարցն, որպէս՝ որբոց Առաքելոցն մերոց Թագէոսի և Բարդուղիմէոսի, և Արդւոց և Թոռանց Լուսաւորչին մերոյ և մեծին Ներսիսի և որբոց Թարգմանչացն. և Թագաւորացն մերոց Արգարու և Ցրդատայց և այլոց յայսպիսեաց, որք (յանփութութենէ և կամ ի թուլութենէ և ի զանցառութենէ մերայնոցն, և կամ ի հետելոցն ի մէնջ՝ յառաջ քան զտպիլ Տօնացուցին), ի լուր աւուրս և ի պահս եղեալք՝ առանց հանդիսաւորութեան և պատարագի տօնեցեալք լինէին իբրև զմի ի հասարակ սրբոց, զայնս յաւուր շաբաթու եղաք, որպէս տեսանէք: Ըստ այսմ և զտօն Ոսկերանին. Կիւրզի և Գրիգորի աստուածաբանին. և այլոց այսպիսեաց:

Քանզի՝ ըստ ասից հասարակութեան, հարկ հասարակաց՝ պատիւ ըսա արժանեաց: Զի թէպէտ հարկաւորիմք ի տօնել փառաւորել, և աղաչել զամենայն սուրբս՝ որոց և կարօտիմք իսկ, ըստ այնմ զի են հաճոյական ծառայք և սիրելիք Աստուծոյ, և համարձակ բարեխօսք. սակայն՝ և սառաւել հարկ է ի վերայ մեր, և պարտական իսկ եմք պատուելոյ և փառաւորելոյ զյատուկ բարերարսն և զերախտաւորսն մեր, որք ոչ միայն են սիրելիք և հաճոյք Աստուծոյ, այլև ծանօթք մեր՝ ըստ Եսայեայ: Որք ունին

զիրաւունս ասելոյ մեզ թէ՝ թէպէտ և բիւր սուրբն և բարեխօսս ունիցիք, այլ ոչ եթէ՝ բազում հարս, զի ի Քըրիստոս Յիսուս աւետարանաւն մեք ծնաք զձեղ ըստ սըրբոյն Պողոսի: Եւ նոյն սուրբ առաքեալն վասն այսպիսեացս ասէ թէ՝ աղաչեմ զձեղ եղբարք, ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս և զիրատիչս ձեր ի Ցէր. և համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ վասն գործոց նոցա:

Արդ՝ ոյք են առաւել սիրելիք և երախտաւորք մեր, եթէ ոչ պատճառքն և ծնօղքն մերոյս քրիստոնէութեան և հիմունքն հաւատոյս մերոյ. այսինքն՝ երջանիկ թագաւորն մեր Արգարիսս, որ գոլովի ինքնի ի հեռաւոր վայրս անձանօթութեան, ի կրօնս և ի պաշտօնս մոլար դիցն կռապաշտութեան, յազգս և յերկիրս անաստուածութեան. յայնպիսում ժամանակի՝ մինչ Քրիստոս յերուսաղէմ քաղաքի՝ ի յիւրոցն և ի ծանօթիցն, յինքենէ քժշկեցելոցն, և ի զմեծամեծ հրաշս տեսանողացն, անարգիւր, հալածիւր, և հանգերձեալ իսկ ի խաչիլ: Ա՛ ոչ զբժշկարար հրաշն տեսեալ, ոչ զազդարար քարոզն լուեալ, ոչ յումեքէ յորդորեցեալ և քարոզեցեալ, այլ ըստ կատարելոյ բանականութեանն, և ըստ անտեսակ բուռն հաւատոյն, որպէս թէ ի տարացոյց յաւեալ, զանարգակերպ և զձառայատեսակն Քրիստոս որպէս զամենազօր և զամենակարօգ Աստուած՝ ինքեան ներկայացուցանէր: Եւ որպէս զիմաստուն որսորդ՝ յանհասանելի խորոց տնօրէնութեան Քրիստոսի՝ զձշմարիտ Աստուածութիւն նորին երկարաձիգ առասանաւ յուսոյն՝ առինքն քարշէր: Որոյ՝ զանձեռագործ և զաստուածատիպ պատկերն որպէս թէ ի գրաւ առեալ

նորին անսուլտ խռովմանն. որով զբժշկութիւն մարմնոյն և զփրկութիւն հոգւոյն գտանէր նախապէս: Մինչեւնախ քան զամենայն աշխարհս և թագաւորութիւնն՝ զմեծ Առաքեալն նորին զսուրբն Թաղէոս առ ինքն ածէր, որով և զանունն Քրիստոսի յաշխարհս Հայոց մուծանէր: ԶԹաղէոսն ասեմ, զարիաջան, զբաղմաշխատ և զարիւնագիրտ մշակն Քրիստոսի, զնախկին Լուսաւորիչն հոգւոց մերոց, և զծնօղն մերոյս հաւատոյ՝ որ արեամբն իւրով սոռնդանելով՝ զկորդացեալ և զապառաժացեալ ազգս Հայոց կակղացուցեալ և զգօնացուցեալ՝ յաւետարանն սուրբ ընտանեցուցանէր: Ի կեանս իւր գոգուէր զմեզ ի գիրկս հաւատոյ՝ որպէս զմայր՝ անքուն տքնութեամբ. և ի մահուանն ևս առաւել հոգալով՝ ինդրէր յԱստուծոյ տալ մեզ զթեսու փոխանակ ինքեան Մովսիսի:

Ընդ նմին և սուրբն Բարդուղիմէոս՝ որ լծակից և պաշտօնակից էր նորա: Սոքա երկոքեանս են ամոլք հաւատոյս Հայաստանեայց, և հիմունք քրիստոսադիրք մերոյս եկեղեցւոյ: Եւ ապա ի նոյնոյ սրբոյ առաքելոյն Թաղէոսէ ըստ իւրոյն խնդրոյ՝ շառաւիղեալ ծաղիկն անուշահոտ և պրտուղն քաղցրահամ արիաջան մշակն Գրիգորիոս. (որոյ գովութիւն հոչակեցեալ իսկ է յամենայն յազգս և լեզուս): որ անօրինակ և անտանելի չարչարանօք և Աստուծածազօր հրաշխւք՝ ձեռամբ ածէր նախ զգուռզացեալ և զանառիկ ամրոցն դիւամոլ ախտից և կուոցն պաշտելութեան զարքայն Տրդատիոս, զոր և գործակից առեալ ինքեան, ընդ նմին զաշխարհս և զազգս Հայոց մաքրեալ ի դիցապաշտ մոլորութեանց՝ իբր զազգ մի սուրբ և ժողովուրդ սեպհական՝ Աստուծոյ ընծայեցուցանէր: Եւ ապա,

յօրհնեալ արմատոյ յայսմանէ՝ վերաբուսեալ ոսոքն օրհնութեան Որդիք և Թոռունքն, յորոց և բարեպառուղ ստեղունքն: Որք յիւրաքանչիւր ժամանակս՝ զարդարեալ գեղեցկացուցին զազգս և զեկեղեցիս մեր, ուղղաշաւիդ դաւանութեամբք, վայելուց արարողութեամբք, և համեղաձայն երգօք և շարականօք: Որք և երկնախուիչ աղօթիւք յԱստուծածուստ ընկալան զգիրս հրաշալիս, որովք և թարգմանեցին զամենայն գիրս Աստուծաշաշունչս և հոգենուագ մատեանս սուրբս: Որք և յամենայնի հարստացուցին և պերճացուցին զազգս մեր և զեկեղեցիս հոգեւորականօք գանձիւք. զորս ահա վայելեմք մեք:

Արդ՝ ըստ սրբոյն Նարեկացւոյ՝ սոքա են մեր նախնիք ըստ հաւատոյ, ծնօղք ըստ աւազանին, ճշմարիտ դաւանութեանս մերոյ հեղինակք, եկեղեցւոյս մերոյ հիմնադիրք և պատուարք, իմաստից մերոց դաստիարակք և վարժիչք: Վասն այսորիկ պարտականեմք զսոսա առաւել պատուելոյ, փառաւորելոյ և յատկապէս հանդիսաւորութեամբ տօնելոյ:

Քանզի՝ ոչ միայն ի կեանս իւրեանց եղեն մեզ բարերաք, այլև՝ գոլով համարձակ առ Քրիստոս, միշտ բարեխօսեն առ նա վասն մեր՝ ոչ մուանալով զերկս աշխատանաց իւրեանց:

Եւ զաւուրս տօնից սոցա թէպէտ արժանէր կիւրակեպահել մեզ, սակայն՝ այլովքն զանց արարեալ՝ միայն զաւուրս տօնից սրբոց առաքելոցն մերոց Թաղէոսի և Բարդուղիմէոսի, և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եղաք կիւրակէ. զորս պահել պարտին ամենայն եկեղեցիք Հայաստանեայց: Արդ՝ ջանք մեր այս է, զի օրհնեալ տղգո

մեր՝ եկեղեցական կարգօք և յամենայնի բարեկարգութեամբ. հարուստ և զարդարուն լիցի, որպէս և է շնորհաքն Աստուծոյ. և մի տայցէ զտեղի. ինչ ասելոյ, և կամ կարօտիցի բարեկամաձև թշնամեաց: Որպէս ահա՝ զազգս մեր՝ որպէս թէ ոչ գիտողս և ոչ կարողս գոլ համարելով՝ զտօնս եկեղեցւոյ իւրոյ կարգաւորել և ըստ կարգին տօնել հնարեցին յամի ամի զտետրակ մի խաղոլիս մանկանց, զթունարանն զայն ի ներքուստ, և զծազրապատեալն յարտաքուստ, որով որպէս թէ՝ ի շահել և օգնել մեզ ձեւանան թէպէտ, ոակայն՝ զինքեանս շահեն, և զազգս մեր վնասել ջանան յամենայնի: Զի բաց ի մարմնական՝ վնասուցն զորս տան, առնլով զգոյնսն խարէտկան հնարիւք, նաև ջանան ըստ հոգւոց վնասել: Ապականեալքն մոօք զայն գտին հնար. զի զթունարանն զայն սփռելով օր ըստ օրէ և տարածելով յազգս և յեկեղեցիս մեր՝ որում և ընտելացուցանելով յայն վարժիցեն, և զմերն մոււացուցեալ ինքեանց նմանեցուսցեն: Այս հաւաստի երեխի ի թունացոյցն յայն. քանզի՝ զտօնսն յորում աւուր այլք տօնեն, դնեն գլխագրով և իսկական անուամբ. որպէս զԾնունդն Քրիստոսի, զԶատիկն, և զԱւետիկն և զայլս այսպիսիս: Իսկ ի յայն աւուրսն յորս մեք տօնեմբ դնոյն տօնսն, դնեն աննշան, վայր ի վերոյ և փոքր գրով. և բազմիցս ևս իսպատ զանց առնեն և ոչ դնեն: Եւ զոմնս ևս եթէ դնեն ի մեր տօնելի աւուրսն, ծաղրական անուամբ և կատակելով. որպէս զԾէրնտասն. Զարզարդարն. և զայլս այսպիսիս: Զորս յոմանց պարզամիտ գիւղականաց մերոց առեալ՝ ի հասարակ ազգս մեր վերաբերեալ գրեն անամօթաբար:

Եւ բաց յայսցանէ, մուածելի է և այս մանաւանդապէս՝ զի Տօնացոյց գիրքն՝ է տօնարան. այսինքն՝ շտեմարան, պահապան և ցուցանող ամենայն տօնելեաց և տօնակատարութեանց սրբոյ եկեղեցւոյս մերոյ. այսինքն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ անձառելի տնօրէնութեանն, փըրկագործ կրից և չարչարանացն, երկրպագելի Խաչին և խաչելութեանն: Ամենասրբոյ Հոգւոյն Աստուծոյ և նորին Գալստեանն, ամենափառաւորելոյ սրբուհւոյ Աստուծածնին, և ամենայն երջանկացելոց սրբոցն Աստուծոյ՝ երկնաւորաց և երկրաւորաց: Զորս ունի լիովին և յիշատակէ, և ցուցանէ միշտ՝ Տօնացոյց կոչեցեալ գիրք՝ որպէս յայտնի է: Արդայսպիսի գիրք թէ որքան պատուատրութեամբ և երկիւղածութեամբ ստանալի է և ունելի, ի սուրբ և ի մաքուր տեղիս պահելի, այս ևս ճշմարիտ հաւատացելոց խղճմատանացն է յանձնելի: Մտածելի է ուրեմն նրբապէս թէ, թունացոյցն այն՝ որ տպի ի նորաբոյս լօթերականաց, (և զամենայն վերոյ յիշեցեալ երկրպագելի և ամենափառաւորելի սրբացուցիչ խորհուրդն և զտօնսն). է միայն միոյ ամեայ գործածելի, և յետ միոյ ամին ամենեին ոչ ինչ և անպէտ: Եւ յայն միում ամին յորում իբր թէ պիտանի է, թէ որքան անարգական գնով վաճառի, ի յորպիսի անձինս տարածի, և որքանեօք յարդանօք ստացեալ լինի և կամ պահի, լաւապէս գիտէք ամենելեանքն: Իսկ՝ յետ լրման նոյնոյ ամին, այնուհետեւ թէ՝ որպէս անարգ, անպէտ և իբր զաւելորդ իմն անկանի ի յանկիւնս, ի փողոցս և յազրիւսս, և լինի կոխան ոտից, և կեր ցեցից և մկանց, զայն ևս տեսանէք և գիտէք անտարակոյս: Արդ՝ սիրելիք մեր, եթէ տպողաց և հնարո-

զայ խղճմանացն տանելի է այս անհաւատութիւն, չէ զարմանք ըստ իւրեանց կացութեանն. բայց մեզ հաւատացելոցս և երկիւղածացս. ամենեին անտանելի է. և որպէս ի միոյ գլխաւոր հերձուածողութենէ ի բաց փախչելի:

Այսպիսիք պատճառեցին յանձն առնուլ մեզ զաշխատանս զայս՝ ի գդուշացուցանել զսիրելի ազգդ իմ, զի գիտելով ձեր զխորամանկութիւն, զնենդութիւն և մանաւանդ զորպիսութիւն հաւատոյ նոցին, զգուշասջիք ամենեքեան:

Ահա՝ մեք բարձու իշխանութեամբ սրբոյ Աստուածաին Աթոռոյս, և հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Աստուածահրաշ Աջոյն, և հրամանաւ Հայրապետութեանս մերոյ՝ ընդ նզովիւք արկաք այսուհետեւ զսիրովն, զընդունովն, և զ' ի կիր արկանովն խարէալի տետրակին այնորիկ: Քանզի՝ ոչ կամիմ, և ոչ իսկ զիրաւունս համարիմ, զի եկեղեցիս Հայաստանեայց այնքան իցէ տկարացեալ՝ և յայնպիսի աստիճան հասեալ՝ մինչ զի ինքնին զտօնս իւր ոչ կարիցէ կարգաւորել, այնպիսեաց ծակամոից, անշանից և անյիշելեաց անձանց կարօտիցի, զի զտօնս իւր նոքօք կարգաւորիցէ: Այնպիսեաց անձանց՝ որոց յոր և յի՞նչ հաւատ հաւատալն՝ կարծեօք. յորմէ ազգէ և յորմէ ժողովրդենէ լինիլն՝ տարակուսանօք, և ինքեանք ով, և ուր, և յի՞նչ կոչման իցեն՝ անյայտ: Եւ զտօնսն՝ զորս շարեն, ինքեանք ոչ տօնեն և ոչ պատուեն, և զեկեղեցիդ քո իսկ՝ ոչ ընդունին: Մտածելի է թէ՝ ո՞ր հաւատով ի՞նչ դիտաւորութեամբ և ո՞րպիսի կարգաւ իցէ շարեցեալ տօնքն նոցա:

Արդ՝ (եթ ոչ կամիմ՝ որպէս ասացի, և ոչ զիմայինսդ-

թողում զի կամիցիք), իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ իմ ասէ մարգարէն: Զնենդաւորաբար մատուցեալն պատարագ՝ առ մատուցանօղն դարձոյց Աստուած: Եւ մանաւանդ՝ շնորհօքն Աստուածոյ եկեղեցիս մեր կարողէ (որպէս մինչեւ ցայսօր, նոյնպէս և այսուհետեւ)՝ զտօնս իւր կարգաւորել և տօնել: Վասնորոյ գրեմք հարկիւ և պատուիրեմք ձեզ՝ բոլորից Հայաստանեայցդ եկեղեցեաց. և գոցին գլուխ կարգեալ Առաջնորդաց, Վարդապետաց, Աւագ երիցանց և հասարակ Քահանայից, և քնաւից մանկանցդ եկեղեցւոյ, և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի շնորհածին և հարազատ որդւոցդ. որոց և կանոնագրեմք իսկ՝ բարձու իշխանութեամբ Հայրապետութեանս մերոյ. զի նախապէս պարտիք ամենեքեանք զթունացոյցն զայն անհետ առնելի ձենջ և խոտել իսպառ: Եւ երկրորդապէս, ամենեքեանքն պարտիք զնոր Տօնացոյցս զայս առ ձեռն բերել՝ և սովաւ վարիլ այսուհետեւ:

Եւ մի գուցէ ոմանց զանց արարեալ զհրամանաւ մերով՝ թողեալ զայս նորոգ Տօնացոյցս՝ վերսաին հնովն վարիցին ըստ կամաց իւրեանց, և կամ զթունացոյցն զայն ի գործ ածիցին: Ամէն ասեմ ձեզ, զի այնպիսիքն յայտնապէս մեղանչեն ընդ գէմ սրբոյ եկեղեցւոյ, և հրամանիս մերոյ: Զի առ ոտն արկանեն զԱստուածահանոյ հրամանս մեր, և վերսաին և ես առաւել լինին պատճառ այլայլեցման և տարաձայնութեան սրբոյ եկեղեցւոյս մերոյ՝ և սորին տօնակատարութեանն: Որք և արժանի իսկ են այնպիսիքն ընդունիլ զնզովս յամենայն սրբոցն Աստուածոյ, ի սրբոյ եկեղեցւոյ և ի մէնջ:


Եւ թէ պատճառիցեն ոմանք անելով թէ՝ մեք ոչ եթէ

վասն տօնից և եկեղեցական արտօրողութեանց ստանամք զօրացոյցն զայն, այլ վասն այլոց ըստ աշխարհի զբօութեացն որպէս ի նմա գոն: Այնպիսեաց զպատասխանին տուեալ եմք ի վերջաբանութեան գրքոյս. անդ տեսցեն: Քանզի մեք ոչ արգելուլ և ոչ խափանել կարեմք զհասարակեալ առասպելաբանութիւնն աշխարհիս. բայց արգելումք, և ջանամք խափանել որքան կարեմք զորոմնացանութիւնն՝ որք սերմանին ի թշնամեաց ի սուրբ և յանաբատ եկեղեցիս մեր: Ուրեմն՝ յեկեղեցիս և յեկեղեցական իրագործութիւնս մեր մի հուպ լինիցին բընաւ. և զայլոց եկեղեցեացն մի մուծցեն յեկեղեցիս և յազգս մեր. այլն ամենայն, որքան և կարեն ըստ աշխարհի, լցուցեն զիթուղթս:

Արդ՝ սիրելիք իմ. որովհետեւ՝ մեք զներքսական և զարտաքսական հոգսն մեր թողեալ՝ զպայծառութենէ եկեղեցւոյս մերոյ և զբարեկարգութենէ օրհնեցելոյ ազգիդ հոգալով՝ զաշխատանս զայս յանձն առաք, պարտիք և գուք ամենեքեան մեծաւ փափագանօք ընդունիլ՝ և զսա ի կիր արկանել հարկաւորապէս յամենայն եկեղեցիս, առանց այլ և այլ պատճառագրութեանց:

Եւ մանաւանդ՝ սա ոչ միայն զծօնացուցինն կատարէ զգործ, այլ զօրացուցինն և զպարզատօմարինն՝ դիւրին և անվտանգ ճանապարհաւ, որպէս տեսանէք: Ուստի ի հասնիլն ձեր ի սկիզբն տարւոյն, որ է Ծնունդն Քրիստոսի, պարտիք նախապէս ի յերկրորդում հատորոջն զիորան ծարեգրոյն գտանել և առ ձեռն ունիլ, և ապա ըստ նորին ցուցմանն ի կիր արկանել զառաջին հատորս զայս, և տօնել զամենայն տօնս առաջիկայ տարւոյն: Որով ա-

մենայն եկեղեցիք մեր զմի և զնոյն տօն կատարելով՝ միապէս ընթանայցեն. և միաձայն փառաւորեսցեն զմի և զնոյն եկեղեցւոյ գլուխն զՔրիստոս, և զի նա միաւորեցեալ անդամն՝ որք են ամենայն առւրբք: Որ և ի համաձայն օրհնաբանողացդ օրհնաբանեցեալն Քրիստոս օրհնեսցէ զամենեսեանսդ բարեխօսութեամբ համաձայն տօնելոցն ի ձէնջ՝ համայնից սրբոց իւրոց: Ամէն:




ՏՕՆԱՑՈՅՑ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՅՈՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԻՆ

ԵՄԵՆԵՑՆ ՏՕՆՔ, ՊԵՀՔ, ԸՆ-
ԹԵՐՑՈՒԵԿ ԵՒ ԵՐԵՐՈՊՈ-
ԹԻՆՔ ՀԵՅՍՈՏԵՎԵՑՑ Ա-
ԵԿԵՂԵՑԻՈՅՑ:



ԿԱՆՈՆ ԾԱՆԴԵԱՆ ԵՒ ՑԱՅՑՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒՇՈՅ
ՄԵՐՈՅ.

Աստուածայայտնութեան գիշերին հսկումն է սաղ-
մոսիւք և պաշտամամբք։ Եւ առաւօտու օրհնու-
թիւն, դկ. Խորհսւրդ մեծ։ Բայց զգեցցին Հայրապետն,
քահանայքն, և ամենայն պաշտօնեայք, և ջահիւք և
մոմիւք լուցելովք եկեսցեն յատեանն, և այնպէս երգես-
ցեն զօրհնութիւնն։ Սոյնպէս և ի տէր երկնցին, զգեստա-
ւորեալք ամենեքեան՝ եկեսցեն յատեանն. և յաւարտիլն
Տէր երկնցին, ելցէ Հայրապետն, կամ մի ոմն ի պատո-
ւաւորացն ի սեղանն. ասսացեն՝ օրթիւ։ Աւետ. Ղուկ.
Եւ հովհիւքն էին. Բ. գլուխ. 8 հմր. վերջ. Փառք ի բար-
ձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ
հաճութիւն. 14 համար։ Եւ զՓառք ի բարձունսն մինչեւ
ի կէսն ասիցեն, և ապա զմնացորդ աւետարանն կարդայ-
ցեն, Եւ եղեւ իբրև վերացան. վերջ, որպէս պատմեցաւ
նոցա. 20 համար։ Եւ ապա զմնացեալն Փառք ի բար-
ձունսէն՝ երգեսցեն։ Առաւօտու երգ, Արեգակն արդա-
րութեան. փոխ. Ի վայելցութիւն որբոց։

Խոկ թէ ի կիւրակէի հանդիպիցի, իւղաբերից աւետա-
րան կարդայցեն. քարոզ. Մայր սուրբ. աղօթք. Գոհանամք
զքէն։ Սուրբ Աստուած որ ծնար և յայտնեցար։ շար.
դկ, Խորհուրդ մեծ. զկնի՝ որթիւ. Աւետարան Ղուկ,
Քանզի բազումք. Ա. գլ. 1 հմր. վերջ, ի մարդկանէ. 25
հմր։ Երկրորդ շար. Այսօր ցնծան. զկնի՝ որթիւ. Աւետա-
րան Ղուկ, Եւ յամնեանն. Ա. գլ. 26 համար. վերջ, և
զնաց ի նմանէ հրեշտակն. 38 համար։ Երրորդ շարական,

Այսօր բանն. զկնի՝ որթիւ. Աւետարան Դուկ, Յարուցեալ.
Ա. գլ. 39 համար. վերջ, երեւելոյ նորա խրայէլի. 80 հա-
մար: Զորրորդ շարական, ի հօրէ ծագէ". զկնի՝ որթիւ.
Աւետարան Դուկ, Եւ եղեւ ընդ աւուրսն. Բ. գլ. վերջ,
տեղի իջեանի. 7 համար: Մազմոս կցորդ ձթ. Ի վայելչու-
թիւն. փոխ. Ասաց տէր ցտէր իմ. զկնի՝ որթիւ. Աւետա-
րան Մատ. Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի. Ա. գլ. 1
համար. վերջ, ազգք չորեքտասանք. 17 համար:

Թօէ ի Կիւրակէի հանդիպիցի, Նորաստեղծեալ ասիցեն.
և թէ յայլում աւուր, ըստ աւուրն՝ զԱրարչականն. և
զկնի՝ Ծածկեալ խորհուրդն ծանուցաւ. քարոզ. Խնդրես-
ցուք. կեց՛. աղ. Քում ամենազօր և հրաշալի ծննդեան
և յայտնութեանդ Քրիստոս Աստուած մեր: Ճաշու ժա-
մանուտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ. փոխ. Մե-
ծացուսցէ. Շարական գձ. Սուրբ զաստուածածինն: Մաղ.
կցորդ. Բ. Տէր ասաց ցիս. փոխ. Ծնդէ՞ր խոռովցան. Առա-
քեալն՝ Տիտոս, Քանզի երեւեցաւ. Բ. գլ. 11 համար. վերջ,
զի մի ոք իցէ որ զքեզ արհամարհիցէ. 15 համար: ալէ",
Այսօր ծնաւ որ ի հօրէ. Աւետարան Մատ. Եւ Յիսուսի
Քրիստոսի ծնունդն. Ա. գլ. 18 համար. վերջ, զանուն նորա
Յիսուս. 25 համար: Մբեասցութիւնն. Յազմութիւնն է
յայս ուն օր»:

Իսկ զկնի պատարագին՝ երթիցեն ի ջուրն խաչիւ և ա-
ւետարանաւ ասելով շարական գձ. Լոյս ի լու: զկնի՝ սաղ.
կցորդ. իլ. Զայն Տեառն ի վերայ. փոխ. Մատուցէք Տեառն.
Եւ ընթեռնուցուն զգրեալսն գրքին: Մարգարէ Եսայ,
Այսպէս ասէ տէր, և առէք. Ժ. գլ. 3 համար. վերջ, ի մէջ
նոցա. 6 համար: Գիրք Յեսուայ. Եւ եղեւ իբրև չուեաց.

Գ. գլ. 14 համար. վերջ, անցին ընդ ցամաք. 17 հա-
մար: Գիրք Ելից, Եւ խաղացոյց. Ժ. Գ. գլ. 22 համար.
վերջ, և փորձեաց զնա. 26 համար: Գիրք Դ. Թագ.
Եւ ասեն արք քաղաքին. Բ. գլ. 19 համար. վերջ, զոր խօ-
սեցաւ. 22 համար: Մարգարէ Եղեկ. Եւ եմոյծ զիս. Խէ.
Գլ. վերջ, և Ելք նոցա ի բժշկութիւն. 12 համար: Առա-
քեալն Ա. Կորն. Ոչ կամիմ, Ժ. գլ. վերջ, էր ինքն Քրիս-
տոս. 4 համար: ալէ, Ուրախ լիցին երկինք. Աւետարան
Մատ. Յաւուրսն յայնոսիկ. Գ. գլ. վերջ, ընդ որ հաճե-
ցայ. 17 համար: Եւ սարկաւագն քարոզէ զոր կայ ի ցու-
ցակն: Եւ ընթերցցին զաղօթս սրբոյն Բարսղի. և ասացեն
զմեծ քարոզն ձայնիւ. և զայլ տաղսն: Դնիցեն ի ջուրն
զմի խաչ միայն: Եւ եպիսկոպոսն առեալ զսուրբ նշանն
և զսուրբ մեռոնն ի ձեռն՝ տեառնագրեսցէ զջուրն, ասե-
լով. Օրհնեսցի և սրբեսցի ջուրս՝ սկս նշանաւ սուրբ խա-
չիս, և սուրբ մեռոնաւ և սուրբ աւետարանաւս: Եղիս
Հոնեա: Եւ ապա հանեալ զխաչն ի ջրոյն, ասիցեն շարա-
կան գձ, Առաքելոյ աղաւնոյ: Եւ եպիսկոպոսն արկցէ
զսուրբ մեռոնն ի ջուրն: քարոզ. Սուրբ խաչիւս. աղ. Պահ-
պանեա. Հայր մեր որ յերկինս:

Եւ երթիցեն յեկեղեցին: և արասցեն նախատօնակ Յով-
հաննու. Մկրտչին. շարական ակ, Արեգականն: («ը էլէ
է բուրգ» Էցեն Էլւալէ, է բաւանալն անելով Էլեայէն): Եւ
ի սկսանիլն զհարցն, ամենեքեան համբուրեսցեն զսուրբ
աւետարանն: Եւ ի կատարիլն նախատօնակին, Քրիստոս
Աստուած մեր. վասն խաչի. քարոզ. Սուրբ ճգնաւորօքն.
աղ. Օր ընտրեցեր և ընկալար:

Յայս ուն օր առաջութեան էլքն. Արեգակն արդարութեան է, գուրով. Մայր սուրբ: Առըն Առաջութեան որ ծնար և յայտնեցար, և զինի առըն Առաջութեան, ա-Երարանի առաջ, ի վայելչութիւն. իւմ, Ասաց Տէր յՏէր իմ: (և ձաշու-ժամանափառ էր էն, յառաջն պլին առա):

Երեկոյին. Խոնարհեցն և Ապրեցն: Մեսեղի Գ. են. յառաջն պլին առա: Ա. Տէր ասաց յիս: Բ. Իջցէ որպէս զտնձրե: Գ. Մեծացուսցէ: քարոզ. Մայր սուրբ «Համբարձի՝ զվարդուեան աւուր օրհնութիւնն ասա: իսկ զկնի Հայր գթածին, միաբան յատեանն ելցեն խաչիւ և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք. և զառտջիկայ աւուր Հարցն իւր սարօքն ասելով, նախատօնակ արասցեն յայս ութն օրս. քարոզ. Սուրբ զԱստուածածինն. աղ, Ընկալ տէր զաղաչանս:

Երկրորդ աւուր առաւօտուն. ահ. դկ, Այսօր բանն ի հօրէ. իւր սարօքն: ալէ, ծննդեան: սաղ, ձթ. ի վայելչութիւն. փոխ. Ասաց տէր յտէր իմ: Աւետ. Մարկ, Վկիզբն աւետարանի. Ա. գլ. վերջ. պաշտէին զնա. 13 հմր: Յայս ուն օր առա լԱրարականն ըստ պատշաճի առաջն: քարոզ. Խնդրեսցուք. աղ. Քում ամենազօր: ձաշու ժամանաւ. Աղաչեմք զքեզ: սաղմոս Ե. Տէր որպէս զինու. փոխ, Բանից. Գործք առաք, Ստեփաննոս. Զ. գլ. 8 հմր. վերջ, կոծ մեծ ի վերայ նորա. Ը. գլ. 2 համար: ալէ, Հոգւովն որբով զօրացեալ. Աւետարան Յով, ձթ. Ամէն ամէն ասեմ ձեզ. ԺԲ գլ. 24 համար. վերջ, հայրն իմ. 26 համար:

Երրորդ աւուր առա. ահ. դկ. Էակից. իւր սարօքն: սաղմ. կցորդ, ձթ. ի վայելչութիւն. փոխ, Ասաց

տէր յտէր: Աւետարան Մատ. է. Յաւուրսն յայնոսիկ. Գ. գլ. վերջ, և պաշտէին զնա. Դ. գլ. 11 համար: Ճշւ. Ժամանուտ. Աստուածածին անհարսնացեալ: Սաղմ. Բ. կցորդ, Տէր ասաց յիս: փոխ. Ընդէր խոռվեցան: Առաքեալն. Երբ. Բաղում մասամբք. Ա. գլ. վերջ, և ամբ քս ոչ պակասին. 12 համար: ալէ, Կարապետն Յովհաննէս: Աւետարան Մատթ. զ. Եւ իբրև գնացին. Բ. գլ. 13 հմր. վերջ, նազովրեցի կոչեսցի. 23 համար:

Պորբորդ աւուր առաւ. ահ. դձ. Այսօր Գաբրիէլ. իւր սարօքն: Աւետարան Յով. ա. Խսկզբանէ էր բանն. Ա. գլ. 1 հմր. վերջ, Յիսուսի Քրիստոսի եղեն. 17 համար: Ճշւ. Ժմւտ. Աստուածածին զքեզ: Սաղմ. Ճթ. ի վայելչութիւն: Առաք. Գաղ. Զայս ասեմ. Գ. գլ. 1 հմր. վերջ, և ժառանգ Աստուածոյ. 7 համար: ալէ, Ուրախ լեր բերկրեալ: Աւետ. Ղուկ. գ. Եւ յամնեանն. Ա. գլ. 26 համար. վերջ, և գնաց ի նմանէ հրեշտակն. 38 համար:

Ինդերորդ աւուր առաւ. ահ. դձ. Այսօր որ յաթու. իւր սարօքն: Աւետարան Յով. զԱստուած ոչ ոք ետես. Ա. գլ. 18 համար. վերջ, մկրտէր և անդ լինէր, 28 համար: Ճշւ. Ժմւտ. Աղաչեմք զքեզ: Սաղմ. Ղ. կցորդ. Բարձր արարէք: փոխ. Տէր թագաւորեաց բարկացան: Առաքեալն Երբ. Զի ոչ էք մատուցեալ. ԺԲ. գլ. 18 համար. վերջ, զի հաստատուն կացցեն անշարժքն. 27 հմր: ալէ. Գու մանուկ մարգարէ. Աւետարան Ղուկ. գ. Յարուցեալ Մարիամ. Ա. գլ. 39 համար. վերջ, և դարձաւ իտուն իւր. 56 համար:

Վեցերորդ աւուր առաւ. ահ. գձ. Անսկզբնական. իւր սարօքն: Աւետ. Յով. ի վաղիւ անդր. Ա. գլ. 29 հմր. վերջ, սա է որդին Աստուծոյ. 34 հմր: ձշւ. ժմւտ. Աստուածածին անչարմնացեալ: Սաղ. Իթ. Տէր հաներ. փոխ. Բարձր առնեմ. Առաք. Ա. Թես. Ոչ կամիմ եղբարբ. Դ. գլ. 12 հմր. վերջ, բանիւքս այսոքիւք. 17 հմր: ալէ. Եհան զիս. Աւետ. Յով. Եւ էր ոմն հիւանդ. ԺԱ. գլ. 1 հմր. վերջ, և պատմեցին նոցա զոր արարն Յիսուս. 46 հմր:

Եօթներորդ աւուր առաւ. ահ. բձ. Անեղանելի. իւր սարօքն: Աւետ. Յով. ի վաղիւ անդր կայր Յովհաննէս. Ա. գլ. 29 հմր. վերջ, որդւոյ մարդոյ. 51 հմր: ձշւ. ժմւտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ, Սաղմ. ՂԵ. Աւետարանեցէք: փոխ. Օրհնեցէք զՏէր: Առաք. Հոօմ. Պողոս ծառայ Յիսուսի Քրիստոսի. Ա. գլ. 1 հմր. վերջ, և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. 7 հմր: ալէ. Երդուաւ տէր: Աւետ. Ղուկ. Եւ եղեւ ընդ աւուրսն. Բ. գլ. 1 հմր. վերջ, տեղի իջևանի. 7 հմր:

Ռւթերորդ աւուրն՝ տօնէ Յայտնութեան և Թլիատութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: ահ. գձ. Լոյս ի լուսոյ. իւր սարօքն, Զկնի տէր երկնիցին առանց սաղմոսի ասի որթիւ. Աւետ. Ղուկ. Եւ հովիւքն էին. Բ. գլ. 8 հմր. մինչ գայ յայն տեղին զոր ասէ. Փառք ի բարձունս Աստուծոյ: (որպէս ի գիշերի ծննդեանն), ասասցեն զմի տունն ի Փառք բարձունսէն. և ապա զմնացորդ աւետարանն կարդասցեն. Եւ եղեւ իբրև վերացան. վերջ, որպէս պատմեցաւ նոցա. 20 հմր: և զմիւս տունն ասասցեն. Եւ յամենայն ժամ: Առաւօտու երգ. Արեգակն արդա-

րութեան: Սաղմ: ձթ. կցորդ. ի վայելչութիւն. փոխ. Ասաց Տէր ցՏէր իմ: Աւետ. Ղուկ. զ. ի հնգետասաներորդի. Գ. գլ. 1 հմր. վերջ, առժամանակ մի. Դ. գլ. 13 հմր: ձշւ. ժմւտ. Աղաչեմք զքեզ: Սաղմ. ՂԵ. Եցոյց Տէր. փոխ. Օրհնեցէք ըզ-Տէր. Առաք. Կող. Զգոյշ լերուք. Բ. գլ. 8 հմր. վերջ, ի յարութեան իւրում. 15 հմր: ալէ. Ուրախ լեր բերկրեալ. Աւետ. Ղուկ. գ. Եւ իբրև լցան աւուրք ութ. Բ. գլ. 21 հմր. վերջ, զնա յորովայնի. (Ֆ առան): Խոկ յերեկոյին, Հմր. գձ. Լոյս ի լուսոյ: զերիսն ի միասին ասա: զկնի քրզ. Սուրբ զաստուածածինն. աղօթք. Ընկալ Տէր զագաչանս:

Աւայտէ մնչւ ի յԱռաջուոցի Բարեկենդանն, մշտ ի Տարեգիրն աւեցէ: Ակ սկընոյի որտանունինն և լուսաջիկա, Երեաւ առնուդ, Ակ սկընու, և առաջ այստին առնիւ, Խոյնու զկերակէսն, զարեցւունն և զուրբանուն դոցա, հանդէլը Հարցիւնն ի-ըւակի, Դիր առը- ոյն շո-շտնի ժեղ: Խոկ պատճենն ասա աւեցէս:

Զկնի ութ օրէից Առաջին կիւրակին՝ Հրց. գձ. Մա- գումն միածնի: Սաղմ. ձժբ. Եղիցի անուն Տեառն. փոխ. Օրհնեցէք մանկունք. Աւետ. Ղուկ. ժէ. Եւ դարձաւ Յիսուս. Դ. գլ. 14 հմր. վերջ, ընդ մէջ, նոցա գնայր. 30 հմր: քրզ. Խոդքեսցուք. աղ. Քում ամենազօր: ձշւ. Սաղ. Քեզ վայելէ. Մարգ. Եսայ. Ուրախ լեր ամուլ. ԾԴ. գլ. 1 հմր. վերջ, մանկունք քո. 13 հմր: Առաք. Ա. Տիմ. Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի. Ա. գլ. 1 հմր. վերջ, որոյ ե- ղէ ես հաւատարիմ. 11 հմր: ալէ. յարութեան. Աւետ. Յով. ժը. Եւ յաւուրն երրորդի. Բ. գլ. 1 հմր. վերջ, աշա- կերտքն նորա. 11 հմր:

Առաջին Զորեք շաբաթ. Ճշւ. Սաղ. ԶԵ. Կեցօ զծառայս
քո. փոխ. Ողորմեա ինձ. Առաք. Ա. Տիմ. Կամիմ զի
արք կայցեն. Բ. Գլ. 8 հմր. վերջ, որի Քրիստոս. Գ. Գլ.
13 հմր. ալէ. պհց. ի ձայնէն. Աւետ. Յով. Ժթ. Յետ այսո-
րիկ էջ Յիսուս. Բ. Գլ. 12 հմր. վերջ, զոր ասաց Յիսուս. 22
համար:

Առաջին Ուրբաթ. Ճշւ. Սաղմ. ՂԵ. Տեսին ամենայն.
փոխ. Օրհնեցէք: Առաք. Ա. Տիմ. Այլ հոգին սուրբ:
Դ. Գլ. 1 հմր. վերջ, զի մի ոք զքո մանկութիւնդ արհա-
մարհիցէ. 12 հմր. ալէ. պահոց ի ձայնէն. Աւետ. Յով.
Իդ. Եւ իբրև էր յերուսաղէմ. Բ. Գլ. 23 հմր. վերջ,
հաւատայցէք. Գ. Գլ. 12 հմր:

Երկրորդ Կիւրակէ. Ճշւ. Սաղ. Քեզ վայելէ. Մարգարէ
Եսայ. Այսպէս ասէ Տէղ ցիսրայէլ, եթէ դար. ԾԲ.
Գլ. 13 հմր. վերջ. ի ճանապարհս նոցա. ԾԹ. Գլ. 7 հմր:
Առաք. Ա. Տիմ. Այլ օրինակ լինիջիր. Դ. Գլ. 12 հմր. վերջ.
Պհետ երթեալ իցէ. Ե. Գլ. 10. հմր. Աւետ. Յով. Իդ. Եւ ոչ
ոք ել յերկինս. Գ. Գլ. 13 հմր. վերջ, թէ աստուծով գոր-
ծեցան. 21 հմր:

Երկրորդ Զորեք շաբաթ. Ճշւ. Սաղմ. ԶԵ. Կեցո զծա-
ռայս. Առաք. Ա. Տիմ. Որք բարւոք վերակացուքն
են. Ե. Գլ. 17 հմր. վերջ, մերժիջիր յայնպիսեաց. Զ. Գլ.
5 հմր. Աւետ. Յով. Իդ. Յետ այսորիկ եկն Յիսուս. Գ. Գլ.
22 հմր. վերջ. մնայ ի վերայ նորա. 36 հմր:

Երկրորդ Ուրբաթ. Ճշւ. Սաղ. ՂԵ. Տեսին ամենայն. Ա-
ռաք. Բ. Տիմ. Վշտակից լեր. Բ. Գլ. 3 հմր. վերջ, ի

կործանումն լսողաց. 14 հմր: Աւետ. Յով. Խթէ ևս
վկայեմ. Ե. Գլ. 31 հմր. վերջ, բանից հաւատայցէք. 47
հմր:

Երրորդ Կիւրակէ. Ճշւ. Սաղմ. Քեզ վայելէ. Մարգարէ
Եսայ. Վասն Սիօնի ոչ լրեցից. ԿԲ. Գլ. 1 հմր. վերջ,
մինչև ի ծագս երկրի. 11 հմր. Առաք. Բ. Տիմ. Փութաս-
ջիր զանձն քս. Բ. Գլ. 15 հմր. վերջ, զանուն Տեառն. 19
հմր: ալէ. Յարութեան ի ձայնէն. Աւետ. Յով. Ժը.
Են կամք հօր իմայ. Զ. Գլ. 39 հմր. վերջ, ընդունի զկեանս
յաւիտենականս. 47 հմր:

Երրորդ Զորեք շաբաթ. Ճշւ. Սաղ. ԶԵ. Կեցո զծառայս.
Առաք. Բ. Տիմ. Այլ ի տան մեծի. Բ. Գլ. 20 հմր.
վերջ, ի նորա կամն. 26 հմր: ալէ. պահոց ի ձայնէն. Աւետ.
Յով. կդ. Ես եմ. հացն կենաց. Զ. Գլ. 48 հմր. վերջ, յա-
ւուրին յետնում. 55 հմր:

Երրորդ Ուրբաթ. Ճշւ. Սաղ. ՂԵ. Տեսին ամենայն ծագք:
Առաք. Բ. Տիմ. Զայս գիտասջիր. Գ. Գլ. 1 հմր. վերջ,
ոչ հասանին. 7 հմր: Աւետ. Յով. Հ. Հոգին է կենդանա-
բար. Զ. Գլ. 64 հմր. վերջ, և մի էր յերկոտասանիցն. 72
հմր:

(Ելէ ասոյ ըստ ցուցանելոյ Տարէ Քրիստու Կիւրակէ հար-
կա ուրեցէ աւ զինի Վարդակակ Երէրից Կիւրակէն. Էայց ըշ-
Հարցն է Տարէ Քիւրակ աւ աւ):

Յեա ս-ն օրէիցն Տօն+ Ենէ առէիցին՝ սուտ էն:

Ամս՝ Տօն ծննդեան սրբոյն Յովհաննու Կարապետին:
Յերեկ. Նխտօնկ. Արեգականն. իւր սարօքն: Եւյա-
ռաւօտուն Աս, ահ. ակ. Արեգականն. իւր սարօքն: առաւօ-
տու երգ, Դու մանուկ: Քրդ. Աստուած մեծ հզօր: Մկ.
դկ. Մարգարէից գերագոյն: Ճշւ. Ժմւածնթա-
ցութիւն: շար. դկ. Այսօր ցնծայ եկեղեցի: Սաղմ. Դու
մանուկ մարգարէ. Առակ. Զձեզ աղաչեմ ով մարդիկ. Ը.
դլ. 4 հմր. վերջ, չարժէ զնա. 11 հմր: Մրգրէ. Մաղաք.
Այսպէս ասէ Տէր. և ահա ես. Դ. դլ. 4 հմր. վերջ, զամե-
նայն հրամանս և զիրաւունս. 6 հմր: Մրգրէ. Եսայ. Զայն
բարբառոյ. Խ. դլ. 3 հմր. վերջ, զփրկութիւն Աստուծոյ
մերոյ. 5 հմր: Գործք. Եւ իրբւ լնոյր. Փ. 25 հմր. վերջ,
յարուցեալ զթիսուս. 33 հմր: ալէ. Կարապետն Յովհան-
նէս զարհուրեալ. Աւետ. Դուկ. բ. Եւ Եղիսաբեթի լցան
ժամանակ. Ա. դլ. 57 հմր. վերջ, երեւլոյ նորա Խորայէլի.
80 հմր:

Ապա սրբոցն Պետրոսի Հայրապետին, Վլասայ Եպիսկո-
պոսին, և Արիսողոմայ սարկաւագին: Հրց. դձ. Որք
հաղորդեցան. Մկ. և Հմր. դձ. Մանկունըք նոր: Ճշւ.
Ժամամուտ, ԶՀայրապետականն: շար. դձ. Այսօր Երկ-
նայնոցն: Սաղմ. Ճ. Բահանայք քո: Փոխ. Յիշեա Տէր
զԴաւիթ. Առակ Խմաստ. Յայնժամ արդարն կացցէ. Ե.
դլ. վերջ. իցէ մեզ նպաստաւոր. 8 հմր: Մրգրէ. Երեմ,
Բարբոք. Զիք ոք որ գիտէ. Գ. դլ. 31 հմր. վերջ. Ժանօթք
մեր են. Դ. դլ. 4 հմր: Առաք. Հոօմ. Բայց գիտեմք եթէ

որոց սիր. Ը. դլ. 28 հմր. վերջ, որ ի Քրիստոս Յիսուս
ի Տէր մեր. 39 հմր: ալէ. Քահանայք: Աւետ. Յով. զ.
Ես եմ հովիւն քաջ. Փ. դլ. 11 հմր. վերջ, մի հօտ և մի
հովիւն. 16 հմր:

Ապա սրբոյն Անտօնի Ճգնաւորին. ահ. աձ. Որ գերա-
զանցեալ. իւր սարօքն: Ճշւ. Ժամամուտ. Ճգնաւորք
Քրիստոսի: շար. զողորմեայն ասա: Սաղմ. ՃիԳ. Եթէ ոչ
Տէր էր առ մեզ. Առակ. Ուրախութիւն արդարոյ. ԻԱ.
դլ. 15 հմր. վերջ, և որ ոխակալ է, անօրէն է. 24 հմր:
Մրգրէ. Եսայ. Յաւուր յայնմիկ եղիցի սեղան Տեառն. ԺԹ.
դլ. 19 հմր. վերջ, և կատարեսցեն. 21 հմր: Առաք. Եթր.
Եւ արդ՝ զի՞նչ ևս ասացից. ԺԱ. դլ. 32 հմր. վերջ, զի մի
առանց մեր կատարեսցին. 40 հմր: ալէ. Երանելիք են այ-
նոքիկ. Աւետ. Մատթ. զզ. Որ սիրէ զհայր. Փ. դլ. 37 հմր.
վերջ, զվարձ իւր. 42 հմր:

Ապա սրբոցն Յէօգոսի թագաւորին, և Մանկանցն Ե-
փեսոսի. ահ. ակ. Որ զերկնաւոր. իւր սարօքն. Մեծ.
աձ. Երանելի աստուածուէր: Ճշւ. Ժմւած. Որպէս յետ
աստուածաւուէր: շար. զողորմեայն ասա: Սաղմ. Ի. Տէր ի
զօրութեան քում. Առակ Խմաստ. Լուարուք թագաւորք.
Զ. դլ. 2 հմր. վերջ. և մի սխալիցիք. 10 հմր: Մրգրէ.
Եսայ. Այսպէս ասէ Տէր Աստուած ցօծեալն իւր. ԽԵ. դլ.
1 հմր. վերջ, և զնիգս Երկաթիս փշրեցից. 2 հմր: Առաք.
Ա. Տիմ. Եւ արդ՝ աղաչեմ. Բ. դլ. 1 հմր. վերջ, հաւա-
տովք և ճշմարտութեամբ. 7 հմր: Ալէ. Տէր ի զօրութ:
Աւետ. Դուկ. կե. Եւ եղեւ իրբւ կատարեաց. Է. դլ. 1
հմր. վերջ, և գտին զծաւայն հիւանդ բժշկեալ. 10 հմր:

Ապա սրբոցն կիրակոսի և մօրն Յուղիտայի. ահ. մարտիրոսաց ի ձայնէն: Մկ. բկ. Յարմատոց բարեաց: Հմբ. Վարդագոյն: Ճշւ. Ժամամուտ. ի տաճարի սրբոց: Սաղ. Ը. ի բերանոց մանկանց. փոխ. Տէր Տէր մեր. Առակ. Իմաստուն կանայք. ՓՖ. Գլ. 1 Հմր. վերջ, առ ի յիմաստնոց դիւրաւ. 6 Հմր. Մրգրէ. Զաք. Այսպէս ասէ Տէր ամենակալ. Ը. Գլ. 4 Հմր. վերջ, ի հրապարակս նորա. 5 Հմր: Մրգրէ. Եսայ. Ո՞վ են սոքա որք իբրև. Կ. Գլ. 8 Հմր. վերջ. Վառաւորելոյ. 9 Հմր: Առաք. Եբբ. Արդ՝ որովհետեւ. Բ. Գլ. 14 Հմր. վերջ. օդնական լինիւ. 18 Հմր: ալէ. մարտ. ի ձայնէն: Աւետ. Ղուկ. Ճ. Եւ զարմանային ամենեքեան. Թ. Գլ. 44 Հմր. վերջ. նա եղիցի մեծ. 48 Հմր:

Ապա սրբոյն Վահանայ Գողթնացւոյն: Մկ. և Հմբ. բձ. Զարմանալիէ: Ճշւ. Սաղ. Դ. Այլ դու Տէր օգ. Առակ. Որդեակ՝ պահեա զբանս իմ. Է. Գլ. 1 Հմր. վերջ, յերիտասարդաց. 7 Հմր. Մրգրէ. Եղեկ. Եւ եղեւ բան Տեառն առիս. ՓԲ. Գլ. 17 Հմր. վերջ, ամենայն բնակիչք նորա. 19 Հմր: Առաք. Հուօմ. Այսուհետեւ եղբարք. Ը. Գլ. 12 Հմր. վերջ. բարեխօսէ վասն սրբոց. 27 Հմր: ալէ. Մարտի. Աւետ. Ղուկ. զզ. Եւ ասէր առ ամենեսին. Թ. Գլ. 23 Հմր. վերջ. զարքայութիւնն Աստուծոյ. 27 Հմր:

Ապա սրբոց ճգնաւորացն Տրիփոնի, Պարսամայ, և Անոփրիսսի: ահ. աձ. Որ գերազանցեալ. իւր սարօքն: Ճշւ. Սաղ. ԽԱ. Ի ձայն յնծութեան. Մրգրէ Եսայ. Այսպէս ասէ Տէր. ահաւասիկ. ԽԱ. Գլ. 15 Հմր. վերջ, արար գայս ամենայն. 20 Հմր: Առաք. Կաթ. Ա. Պետրոս. Գիտէ Տէր զառառութապաշտա. Բ. Գլ. 9 Հմր. վերջ, զվարձո անիրա-

ւութեան սիրեցին. 15 Հմր: ալէ. Երանելիք են որք: Ա. Եւտ. Յով. դ. Եւ ասէ Յիսուս. Թ. Գլ. 39 Հմր. վերջ, և առաւել ևս ունիցին. Ժ. Գլ. 10 Հմր:

Ապա սրբոց Հայրապետացն Աթանասի և կիւրղի. ահ. ակ. Որք ղարգարեցին. Հրց. Գձ. Որ զանչափ քո: Մկ. և Հմբ. Գձ. Մանկունըք նոր: Ճշւ. շար. Գձ. Այսօր Երկնայնոցն. սաղ. ՃԱ. Քահանայք քո: Առակ. բերան իսոնարհաց. ՓԱ. 2 Հմր. վերջ, կործանի. 11. Հմր: Մրգրէ. Եսայ. Եւ կոչեսցին նորա. ԿԱ. Գլ. 3 Հմր. վերջ, ի վերայ գլխոց նոցա. 7 Հմր: Առաք. Եբբ. Յիշեցէք զառաջնորդո. ՓԲ. Գլ. 7 Հմր. վերջ. որք այնպէսն գնացին 9 Հմր: ալէ. Քահանայք քո: Աւետ. Յով. ՃՃ. Զայս խօսեցայ. ԺԶ. Գլ. 33 Հմր. վերջ, դու առաքեցեր զիս. Փէ. 8 Հմր:

Ապա սրբոց վկայիցն Գորդիոսի. Պօղիքտսսի և Գրիգորիսի: Ճշւ. սաղ. ՃՃ. Պատուական է: Առակ Իմաս. Զի Աստուած հաստատեաց. Բ. Գլ. 23 Հմր. վերջ, նոցա Տէր յաւիտեան. Գ. Գլ. 8 Հմր: Մրգրէ. Եսայ. Վասն այսորիկ լացից. ԺԶ. Գլ. 9 Հմր. վերջ, փրկել զնա. 12 Հմր: Առաք. Բ. Կորն. Քանզի գիտեմք. Ե. Գլ. 1 Հմր. վերջ, զառհաւատչեայ հոգւոյն. 5 Հմր: ալէ. Մարտ. Աւետ. Ղուկ. Բայց՝ յառաջ քան զայս. ԻԱ. Գլ. 12 Հմր. վերջ, զոգիս Ճեր. 19 Հմր:


Ապա սրբոցն Եւգինեայ կուսին, և Հօրն նորա Փիլիպպոսի, և մօրն Կղօդիայ, և Երկուց Եղբարցն Մերգեայ և Ալիտոնի, և Երկուց ներքինեացն: Ճշւ. սաղ. ԽՊ. Տարցին թագա: Առակ. Իմաստութիւն յելս ճանապարհաց գովի. Ա. Գլ. 20 Հմր. վերջ, և ոչ անսայիք. 25 Հմր:

Սրգրէ, Եսայ. Այսպէս ասէ Տէր՝ զոր օրինակ. ՄԵ. գլ. 10
Հմր. վերջ, և մի պակասեցի. 13 Հմր. Առաք, Հռոմ. Ա-
ղաշեմ զձեզ եղբարք. ԺԵ. գլ. 30 Հմր. վերջ, ընդ ձեզ
ամենեսին ամէն. 33 Հմր. ալէ. Կացցէ դշխոյ: Աւետ.
Ղուկ. Մի երկնչիր հօտ փոքրիկ. ԺԲ. գլ. 32 Հմր. վերջ,
Գայ սրդի մարդոյ. 40 Հմր.

Ապա սրբոյն Գրիգորի աստուածաբանին. ահ. ակ. Որք
զարդարեցին: Հրց. դՃ. Աքանչելագործ. Մկ. և
Հմր. բՃ. Որ լուսով: Ճշւ. սաղ՝ ՃԱ. Քահանայք. Առակ,
Լուարուք զիմաստութիւն. Է. գլ. 33 Հմր. վերջ, սիրեն
զմահ. 36 Հմր. Մրգրէ, Յովիկ. Այսպէս ասէ Տէր. սերմար-
նեցէք. Ժ. գլ. 12 Հմր. վերջ, արդիւնք արդարութեան.
12 Հմր. (Հ աս- է): Մրգրէ. Ամոլս. Այսպէս ասէ¹
Տէր՝ առեցին. Ե. գլ. 10 Հմր. վերջ, Տէր Աստուած ամե-
նակալ. 14 Հմր. Գործք. Եւ արդ՝ ահաւասիկ. Ի. գլ. 25
Հմր. վերջ, ընդ սուրբսն ամենայն. 32 Հմր. ալէ. Գու հս
քահանայ. Աւետ: Յով. զ. Ես եմ հոլիւն. Ժ. գլ. 11 Հմր.
վերջ, և մի հովիւ 16 Հմր.

Ապա սրբոց վկայիցն Եւգինեոսի, Մակարիոսի, Վաղե-
նիոսի, Կանգիտոսի և Ակիւղասայ: Ճշւ. սաղ. ՃՓԵ.
Պատուական է: Մրգրէ. Սոփոնիա. Այսպէս ասէ Տէր՝ ա-
հաւասիկ. Գ. գլ. 19 Հմր. վերջ, առաջի ձեր ասէ Տէր. 20
Հմր. Առաք. Բ. Կորն. Եղբարք՝ զի թէպէտ. Ժ. գլ. 3 Հմր.
վերջ, հնազանդութիւնդ կատարեցի. 6 Հմր. ալէ. Մրա.
Աւետ. Մատ. ՃԹ. Ես յորժամ հալածեսցեն. Ժ. գլ. 23
Հմր. վերջ, որ յերկինս է. 33 Հմր:

Իսկ՝ յառաջաւորի բարեկենդանի Կիւրակէին, զյետին
դՃ. Հրցն. ասա. Փառաւորելով. Մեծ. դՃ. Ուրախա-
ցիր Աստուածածին վեր: Ճշւ. սաղ. ԿԴ. Քեզ վայելէ.
Մրգրէ. Եսայ. Յն ծասցէ անձն իմ ի Տէր. ԿԱ. գլ. 10 Հմր.
վերջ, ի սրահս սրբութեանց իմոց. ԿԲ. գլ. 9 Հմր. Առաք.
Բ. Տիմ. Փութասջիր զանձն քո. Բ. գլ. 15 Հմր. վերջ, ի
նորա կամն. 26 Հմր. ալէ. Յար. ի Ճայնէն. Աւետ. Յով.
ծա. Յիսուս իրեւ գիտաց. Զ. գլ. 15 Հմր. վերջ. յերկիրն
յոր երթային. 21 Հմր:



Կանոն Քառասանօցէայ Գալապէտնն Քըսապակ Ասպանծոյ, Հշոյ,
ի Տաճարն:

Իսկ՝ կտօն Քառասնօրեաց գալստեանն Քրիստոսի
ի Տաճարն՝ աստ եղաք, որ ասի Տեառն ընդ առաջ,
և կատարի միշտ ի Փետրվարի ԺԴ. զոր պարտիս այսպէս
առնել: Ի Փետրվարի ԺԴ. աւուր յերեկոյին ասել նախ
զիոնարհեցո. և Ապրեցո. Լոյս զուարթ. մեսեղի գալս-
տեան, Օրչնեալ եկեալ անուամբ տեառն, օրհ. Տէր Աս-
տուած մեր երե: քրզ. Ասասցուք: Սուրբ Աստուած որ
եկիր և գալոց ես: Հմր. աՃ. Մարմնացեալդ ի կուսէն.
զինի. քրզ. Աամն խաղաղութեան: աղօթք. Հայր գթած:
Եւ զգեցցին միաբան քահանայքն՝ և ելցեն խաչիւ և
աւետարանաւ և ամենայն զարդուք ի գուրս. ասելով
շարական դՃ. Այսօր անսկզբնական ծնունդ. իւր սարօքն:



676 ՏԿ

Եւ յաւարտիլ շարականին. Սաղմ. Դէ. Տեսին ամենայն
ծագք. փոխ. Օրհնեցէք զՏէր. Գիրք Նևացւոց, եւ ասէ
Տէր ցՄովսէս. յորժամ լնանիցին. ԺԲ. ԳԼ. 6 հմր. վերջ,
և սրբեսցի. 8 հմր. Առակ. Տէր ստացաւ զիս. Բ. ԳԼ. 22
հմր. վերջ. որ զՃանապարհս իմ պահիցէ. 34 հմր. Մրգրէ.
Եղեկ. Եւ դարձոյց. ԽԴ. ԳԼ. 1 հմր. վերջ, և եղիցի փա-
կեալ. 2 հմր. Մրգրէ. Մաղաք. Այսպէս ասէ Տէր, ահա ես.
Գ. ԳԼ. 1 հմր. վերջ, և որպէս յամն առաջինս. 4 հմր.
Առաք. Գաղա. Ապա օրէնքն դաստիարակք. Պ. ԳԼ. 24
հմր. վերջ, ըստ աւետեացն ժառանգք. 29 հմր. ալէ.
Օրհնեալ որ գալոց ես անուամբ. Աւեա. Դուկ. գ. Եւ
իբրև լցան. Բ. ԳԼ. 22 հմր. վերջ, Եին ի վերայ նորա. 40
հմր. Քրդ. Վասն ի վերուստ, և տեառնագրեսցեն զան-
դաստանն. Քրդ. Սուրբ Խաչիւս: ազօթք. Պահպանիչ: Եւ
լուցցեն զհուրն՝ և ասասցեն զտաղն Քրիստոս փառաց.
և ապա կեցո, և արձակեսցին:

Խարեւէն է շրջելն զբան. որ է առնաց է ներն-ծեալ:

Խսկ՝ եթէ ի յառաջաւորի պահոցն հանդիպիցի, և կամ
թէ ի մեծի պահոցն. ի Փետրվարի ԺԳ. ն. ի Ճշւ. ժամուն,
զերիս ոզորմեայսն ըստ կարգի աւուրն ասասցեն. և զա-
ւուր գիրքն ընթեռնուցուն. ասասցեն զհոգւոցն և արձա-
կեսցին. թողլով զԽոնարհեցոն, և Ապրեցոն: Ապա յերե-
կոյին, Խոնարհեցո և Մալբեցո, և այլն ըստ վերոյ գրեալ
խրատուն:

Եւ ի գիշերին որէ ի Փետրվարի ԺԳ. հսկումնէ, պաշ-
տամամբք և սաղմոսիւք. և դնի սրբութիւնն ի վերայ
բազմոցի յատեանն. և ամենեքեան զգեստաւորեալք ե-
կեսցին յատեան, և ասասցեն հետեակ շարական, աճ.

Մարմնացեալդ ի կուսէն, և օրհնութիւնն դձ. Այսօր ա-
նըսկզբնական, ալէ. Օրհնեալ եկեալ. և Տէր Աստուած
մեր: Եւ ապա կարդասցեն զչորեսին Աւետարանսն ի չորս
անկիւնո եկեղեցւոյն. Առաջին աւետարան դէպ ի յարեե-
լուս. ընթեռնուցուն, շարական աճ. Մարմնացեալդ. 8 Աւ-
րախ լերյոյժ. Պատկերակից զկնի՝ որթիւ. Աւետ. Մատթ.
ւգ. Մի համարիք եթէ եկի լուծանել. Ե. ԳԼ. 1 հմր. վերջ,
յարքայութեան երկնից. 20 հմր. Երկրորդն՝ դէպ ի յա-
րեմունեան կողմն. շարական դձ. Այսօր անսկզբնա-
կան. Այսօր ի տաճարն եկեալ: զկնի՝ որթիւ. Աւետ.
Մարկ. ճճք. Այլ վասն աւուրն այնորիկ. ԺԳ. ԳԼ. 32 հմր.
վերջ. արթուն կացէք. 37 հմր. Երրորդն՝ դէպ ի հարա-
ւային կողմն. շարական դձ. Էղյու ի լուսոյ. Զքեղ որ հո-
գուվ: զկնի՝ որթիւ. Աւետ. Դուկ. Ճկ. Ճուր եկի արկա-
նել. ԺԲ. ԳԼ. 49 հմր. վերջ, զյետին բնիդնն. 59 հմր. Եւ
զչորրորդն դէպ ի հիւսիսային կողմն. շարական դկ. Այ-
սօր ի տաճարն. ի սկզբանէ բանն. զկնի՝ որթիւ. Աւետ.
Յուլ. ա. ի սկզբանէ էր Բանն. Ա. ԳԼ. վերջ, Յիսուսի Փրիս-
տոսի եղեն. 17 հմր. Զկնի շարական բկ. ի գալստեան
Տեառն: Եւ ապա եկեալ յատեանն ասիցեն զհարցն իւր
սարօքն: Եւ թէ ի Կիւրակէ հանդիպիցի, իւղաբերից աւե-
տարան կարգա: Երգ՝ Արեգակն արդարութեան: Քրդ.
Մայր սուրբ. Սուրբ Աստուած որ եկիր և գալոց ես: Եւ
ապա առի Սաղ. Դէ. Տեսին ամենայն ճագք երկրի. փոխ.
Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր: Եւ ընթեռնուցուն
զերեկոյին գիրք և զաւետարանն, և ասասցեն զարարչու-
թեան երգն ըստ պատշաճի աւուրն: Զկնի քրդ. Խնդրես-
ցուք: ազօթք. Քում ամենազօր: Ճշւ ժմւտ. Մերունին.

զերկուսն ի միաօխն ասա: շարական դկ: Անսկիզբն բանն:
Սաղ. Ժ. Կցորդ. Տէր ի տաճար սուրբ իւրում. փոխ. ի
Տէր յուսացայ. Մրգրէ. Եսայ. Եւ եղիցի յաւուր յայնմիկ.
ԽԳ. Գլ. 21 հմր. վերջ. զի բերան. Տեառն խօսեցաւ. ԽԵ.
Գլ. 8. հմր: Գործք. Խալե. Սովոմնչինեաց նմա տուն. Ե.
Գլ. 47 հմր. վերջ. ոչ ձեռն իմ արար զայս ամենայն. 50
հմր. Աւաք. Գաղ. Զայս ասեմ. Ո. Գլ. 1 հմր. վերջ. և ժա-
ռանգ Աստուծոյ. 7 հմր: ալէ. Արդար արձակեա. Աւետ.
Դուկ. գ. Եւ երթային ծնողքն նորա. Բ. Գլ. 41 հմր.
վերջ. և ի մարդկանէ. 52 հմր: Սրբանացութիւն բազմու-
թիւննէ: Յերեկոյին մեսեդի. Մեծացուսցէ: քրզ. Մայր
սուրբ. հմբ. դկ. Այսօր ի տաճարն. (Կէրկուան ի մասին ասա).
Քրզ. Սուրբ զաստուածածինն: ազօթք. Ընկալ տէր: (Իսէ
յետ այնական ժաման: Ենէ ի պահան հանդէպից, և այսակունիւն
ի անդին առանէլ, մէքու շատացին):

¶ Հորս աւուրսն այս պահոց, հարց զաղցմիսն ասա կար-
գաւ, «Եր թաղեալ ես, և զայլսն ամենայն ըստ կարգի
պահոց։ Ի ճշն։ զերեք ողորմեայսն միայն ասա, ապա
զհոգւոց, և ոչ զայլ ինչ. զի ընթերցմունք ոչ գոն։ Իսկ
յերեկոյսն ըստ կարգի պահոց, և Խաղաղական՝ որպէս ի
հասարակ աւուրս պահոց։

Արբաթ օրն՝ յիշատակէ Յօհանու մարգարէին։ ահ։
ապա շխարութեան ի ձայնէն։ Հարց գկկ։ ստեղի։ Որ
զանձառելի։ իւր ստօքն։ Մեծ։ Մարգարէն ի փորոյ կի-

տին։ Ճշմարգ, ճժի. Մերձեսյին։ վորս։ Զայնի իմուլմ։
Սրգրէ. Յօնան։ Եւեղմ բան Տեառն, առ Յօնան։ Ա. գլ.
1 հմր. վերջ, և անպատճ բազում։ Դ. գլ. 111 հմր, և ա-
պա Հոգւոց։ Վ. առ կաթ առ առ մասն կառայ։ Համ առ

Ապաթ. սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա
Մարտիրոսին, և Զորեքտասան զինուորացն։ ահ. ակ.
Ամենասուրբ Երրորդութեան։ Հարց. դկ. Զինուորաւ-
թիւնք։ Մկ. աձ. Զինաւորն Քրիստոսի։ Ճշւ. Ժմւ. Զօ-
րական։ Սաղմ. Ե. Տէր որպէս զինու. փոխ. Բանից իմոց։
Առակ. Երանեալ է այր. Գ. Գլ. 13 հմր. վերջ, Խաղաղու-
թեամք. 17 հմր. Մրգրէ. Եսայ. Նորոգեցարուք առիս. ԽԱ. ։
Գլ. 1 հմր. վերջ, Եթէ ոչ գայցէ. 3 հմր. Առաք. Եփես.
Այսուհետեւ զօրացարուք. Զ. Գլ. 10 հմր. վերջ, որ է
բանն Աստուծոյ. 17 հմր. ալէ. մարտիրոսաց ի ձայնէն։
Աւեա. Ղուկ. միսք. Յայնժամ ասէ ցնոսա. ԽԱ. Գլ. 10
հմր. վերջ, ստասջիք զոգիս ձեր. 19 հմր. :

Ակւրակէ. Հրց. գկ. Անսկիզբն բանդ։ Մեծ. գկ. Աս-
տուածածին պայծառ։ ձշւ. Սաղմ. ԿԴ. Քեզ վայելէ։

Մրգրէ. Եսայ. Զողորմութիւն. ԿՊ. գլ. 7 հմր. վերջ, ըզ-
լեառն սրբութեան քո. 18 հմր. Առաք. Բ. Տիմ. Զայս գի-
տասջիր. Գ. գլ. 1 հմր. վերջ, ի հալածանս կայցեն. 12
հմր. ալէ. յարութեան. Աւետ. Յով. ծբ. ի վաղիւ անդր.
Զ. գլ. 22 հմր. վերջ, որ առաքեացն դիս. 38 հմր:

(1)
Մանի բ աստանօք, զի զինի ժննդեան. առաջին կերպիւն Արտածա-
-որայ բարեկետանի կի-ըակէն, Լ այս կի-ըակէն Հարցոն, որ+էն
ՇՅ. Մագուն մատնի: ՇՅ- Պատառութելու, Լ էն. Անկինն բանդ,
ոչ երան իշրո- անշրջու. առկայն՝ անշարժունին դրայտ. է. (ի)
Տարեկայն ժննւ է (ք) Տարեկայն աւետ. էսէ է (Ա). Տարեկայն
ժննւ է (Ժ) Տարեկայն ու պահի այդ կանոն: Վառն որոյ է յայ-
պիսէ բարիս, է Տարեկայն պարտիս աւասնել. Լ ըստ ցացան նա-
յա առել զշարցոն այս երից կի-ըակէն:

Երկու շաբաթ. սրբոց Աստմեանց զօրավարացն: ահ:
Մորտիբսսաց: Հրց. դկ. Զինուորութիւնք: Մկ. և
Հմր. ակ. Աղաշեմք զքեզ: Ճշւ. Սաղմ. ԽՊ. Ետուր զմեզ
որպէս զոխար: Առակ. Իմաս. Արդ՝ ցանկացարուք. Զ. գլ.
12 հմր. վերջ, տանի յարքայութիւն. 21 հմր: Մրգրէ Ես.
ի ժամանակին յայնմիկ. ԺԷ. գլ. 7 հմր. վերջ, խորշակա-
հար ցամաքեսցին. ԺԹ. գլ. 7 հմր. Առաք. Բ. Կորն.
Յամենայն ժամ զմաշն Յիսուսի. Դ. գլ. 10 հմր. վերջ,
զառհաւատչեայ հոգւոյն. Ե. գլ. 5 հմր: ալէ. մարտ: Ա-
ւետ. Յով. Ճիսէ. Զայս խօսեցայ ընդ ձեզ. ԺԶ. գլ. վերջ,
քանդի ընդ ձեզ էի. 5 հմր:

Երեք շաբաթ. սրբոց Առւքիասեանց վկայիցն: ահ. և
Հրց. մարտիբոսաց: (զւրէ հարցեցն ուր նողւուլէն, անդի

աստ կարգաց): Մկ. և Հմր. բՃ. Ստուգութեամբ տեղեւ:
Ճշւ. Սաղմ. ԽՊ. Որպէս փափազի: Առակ. Լաւէ անուն
բարի. ԻԲ. գլ. վերջ, և աչք Տեառն պահէ զհանճար. 12
հմր: Մրգրէ. Եսայ. Եւ զայլազգիսն որք եկեալ. ԾԶ. գլ. 6
հմր. վերջ, հեթանոսաց ասէ Տէր. 7 հմր: Առաք. Երբ. Եւ
արդ՝ զի՞նչ ևս ասացից. ԺԱ. գլ. 32 հմր. վերջ, զի մի ա-
ռանց մեր կատարեսցին. 40 հմր: ալէ. Երանելիք են այ-
նոքիկ: Աւետ. Ղուկ. Ճիսէ. Բայց՝ ձեզ ասեմ. ԺԲ. գլ.
4 հմր. վերջ, առաջի հրեշտակաց Աստուծոյ. 8 հմր:

Պորեք շաբաթ. Հրց. հանգստեան. գՃ. Օրհնեմք զքեզ:
Ճշւ. Սաղմ. ՃԵ. Կեցն զծառայս քո: Առաք. Բ. Տիմ.
Ամենայն գիրք աստուածաշունչք. Գ. գլ. 16 հմր. վերջ,
որք սիրեցին զյայտնութիւն նորա. Դ. գլ. 8 հմր: ալէ.
պահոց: Աւետ. Յով. ՀԵ. Յետ այսորիկ շրջիւր Յիսուս. է.
գլ. 1 հմր. վերջ, վասն երկիւղին հրէից. 13 հմր:

Ինգ շաբաթ սրբոց Ոսկեանցն. ահ. և Հրց. մարտիբո-
սաց: Մկ. և Հմր. գՃ. Որք արժանաւորեցայք:

Ճշւ. Սաղմ. ՃԼԱ. Քահանայք քո: Առակ. Որդեակ
մի նախանձիր. ԻՊ. գլ. 1 հմր. վերջ, նա գիտէ զամե-
նայն. 12 հմր: Մրգրէ. Երեմ. Այսպէս ասէ տէր՝ ահաւա-
սիկ ես գարձուցից. Լ. գլ. 18 հմր. վերջ, և ես եղէց ձեզ
յԱստուած. 22 հմր: Առաք. Բ. Տիմ. Այլ դու զհետ եկիր.
Գ. գլ. 10 հմր. վերջ, ի հալածանս կայցեն. 12 հմր: ալէ.
Քահանայք քո: Աւետ. Մատթ. ԻՊ. Եւ տեսեալ զժողո-
վուրդսն. Ե. գլ. 1 հմր. վերջ, որք յառաջ քան զձեզ
էին. 12 հմր:

Ալրբաթ. Հրց. հանգստեան. գկ. Բանդ Աստուած:
Ճշւ. Սաղմ. ՂԵ. Տեսին ամենայն: Առաք. Բ. Տիմ.

Փութասջիր գալ առիս. Ի. գլ. 8 հմր. վերջ, շնորհք ընդ
ձեզ ամէն. 22 հմր. ալէ. պահոց. Աւետ. Յով. հե. Իրե
տօնն ընդ միջեցաւ. Է. գլ. 14 հմր. վերջ, բժշկեցի ի շա-
բաթու. 23 հմր:

Պարաթ. սրբոյն Խսահակայ պարթևի հայրապետին մե-
րոյ: ահ. դկ. Արմատ ճշմարիտ: Հրց. զթոռանցն ա-
սա. ակ. Որ զլոյս աստուածային: Մկ. և Հմր. դկ. Որ յար-
մատոց:

Ռշւ. շարական. գկ. Հովիւ քաջ: Սաղմ. Քահա-
նայք քո: Առակ. Իմաստ. Ուրախ եղէ ընդ ամենեսին. է.
գլ. 12 հմր. վերջ, և զշրջիլ ժամանակաց. 18 հմր. Մրգրէ.
Եսայ. Եւ կոչեսցին նոքա աղգք արդարութեան. ԿԱ. գլ.
3 հմր. վերջ, ի վերայ գլխոց նոցա. 7 հմր. Առաք. Երբ.
Ունկնդիր լերուք. ԺԴ. գլ. 17 հմր. վերջ, յաւիտեանս
ամէն. 21 հմր. ալէ. Դու ես քահանայ: Աւետ. Յով. զք.
Ես եմ հովիւն քաջ. Ժ. գլ. 11 հմր. վերջ, և մի հովիւ.
16 հմր:

Ակիւրակէ. Հրց. դկ. Որ յահեղակերպ: Մեծ. Աստուա-
ծածին մայր լուսոյ:

Ռշւ. Սաղմ. ԿԴ. Քեզ վայելէ: Մրգրէ. Եսայ. Հա-
կառակորդք մեր. ԿԴ. գլ. 18 հմր. վերջ, զմեզ մինչեւ
յոյժ. ԿԴ. գլ. 12 հմր. Առաք. Տիտ. Պողոս ծառայ Աս-
տուծոյ. Ա. գլ. 1 հմր. վերջ, վասն զօշաքաղութեան.
11 հմր. ալէ. յարութեան. Աւետ. Յով. Ճա. Ի վերջնում
աւուր. Է. գլ. 37 հմր. վերջ, ի գալիկէ ոչ յառնէ. 52
հմր:

Երկու շաբաթ. սրբոյն Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի
քահանային, Կիւրզի և Բենիամինի սարկաւագացն,
և սրբոց վկայիցն Արդլմնեհի, Որմզդանայ և Սայենի: ահ.
և Հրց. մարտիրոսաց:

Ռշւ. Սաղմ. Քահանայք քո: Մարգարէ Զաքար. Եւ
եղեւ բան Տեառն ամենակալի. Ը. գլ. 1 հմր. վերջ,
լեառն սուրբ. 3 հմր. Առաք. Հուօմ. Բայց գիտեմք՝ եթէ
որոց սիրենն զԱստուած. Ը. գլ. 28 հմր. վերջ, որ ի
Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. 39 հմր. ալէ. Քահանայք քո:
Աւետ. Յով. Ճլը. Զայս պատուիրեմ. ԺԵ. գլ. 17 հմր.
վերջ, որ առաքեացն զիս. 21 հմր:

Երեք շաբաթ. սրբոց Ղեոնդեանց քահանայիցն: ահ.
դՃ. Որ յառաջագոյն: Հրց. դկ. Որ անդադար: Մեծ.
Նահապետացն Արքահամու: Մկ. դկ. Անձառելի: Հմր.
բՃ. Եռգեմք ձեղ:

Ռշւ. Ժմւտ. Յաշխարհական: շարական. դՃ. Պայծա-
ռացան: Սաղմ. Քահանայք քո: Առակ. Իմաստ. Բայց ար-
դարք. Ե. գլ. 16 հմր. վերջ, ողողեսցեն անինայ. 23 հմր:
Մրգրէ. Եսայ. Ուրախ լեր. ԼԵ. գլ. 1 հմր. վերջ, Աստու-
ծոյ մերոյ. 2 հմր: (Պայծառ Եսայ.) Բայց դուք քահա-
նայք Տեառն կոչեսջիք. ԿԱ. գլ. 6 հմր. վերջ, ի վերայ
գլխոց նոցա. 7 հմր. Առաք. Պետր. Ա. Կաթուղ. Օրհնեալ է
Աստուած. Ա. գլ. 3 հմր. վերջ, զոգւոցն փրկութիւն. 9
հմր. ալէ. Քահանայք քո: Աւետ. Ղուկ. Ճիե. Բայց Ճեզ
ասեմ սիրելեացդ. ԺԲ. գլ. 4 հմր. վերջ, մի թողցի նմա.
10 հմր:

Պորեք շաբաթ. Հրց. հանգստ. դՃ. Որ փառօք հօր:
Ռշւ. Սաղմ. ՋԵ. Կեցն զծառայս քո: Առաք. Տիտ.

Ասաց ոմն ի նոցանէ. Ա. գլ. 12 հմր. վերջ, զարդարեսցեն
յամենայնի. Բ. գլ. 10 հմր. ալէ. պահոց: Աւետ. Յով. ձզ.
Դարձեալ խօսեցաւ. Բ. գլ. 12 հմր. վերջ, զի չե ևս հա-
սեալ էր ժամ նորա. 20 հմր:

Հինգ շաբաթ. սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց:
Հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի
մեծ պատերազմին: ահ. դկ. Նորահրտ2. (Զանհաւելին ըն-
հեռն ասա): Հրց. դկ. Որ անդադար: Մկ. ստեղի. դկ. Ա-
րիացեալք:

Շշմւ. ժմւտ. Յաշխարհական: շարական դկ. Արե-
գակն: Սաղմ. ԽԳ. Ետուր զմեզ որպէս զոչխար: Առակ.
Իմաստ. Բայց ոգիք արդարոց. Գ. գլ. 1 հմր. վերջ, նոցա-
տէր յաւիտեան. 8 հմր: Մրգրէ. Եսայ. Այսպէս ասէ տէր
ցիսրայէլ. Խթ. գլ. 8 հմր. վերջ, ճարակք նոցա. 9 հմր: Ա-
ռաք. Երբ. Այսուհետեւ և մեք. ԺԲ. գլ. 1 հմր. վերջ, ի
ձեզ Աստուած. 7 հմր: ալէ. մարտիրոսաց: Աւետ. Ղուկ.
Խզ. Եւ նա ամբարձ. Զ. գլ. 20 հմր. վերջ, հարք նոցա. 26
հմր:

Աւրբաթ. Հրց. հանգստ. դկ. Յաւիտենից Աստուած:
Շշմւ. Սաղմ. Ղէ. Տեսին ամենայն ծագք: Առաք.
Տիտ. Եւ յնւշ արասջիր. Գ. գլ. 1 հմր. վերջ, ձեզ ամե-
նեսին ամէն. 15 հմր: ալէ. պահոց: Աւետ. Յով. ձթ.
Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. Բ. գլ. 21 հմր. վերջ, բա-
զումք հաւատացին ի նա. 30 հմր:

Վաբաթ. սրբոցն Կոստանդնու պօլսոյ սուրբ Ժողովոյն
հարիւր յիսուն հայրապետացն: ահ. դձ. Այսօր սըր-

բոց հայրապետացն. իւր սարօքն: Մկ. գձ. Ո՞վ հրաշալի:
Շշմւ. ժմւտ. Զհայրապետականն. շարակ, դձ. Այսօր
երկնայնոցն: Սաղմ. Քահանայք քո: Մրգրէ. Եղեկ. Եւ
եղեւ բան տեառն. Գ. գլ. 16 հմր. վերջ, ապրեցուսցես.

19 հմր: Առաք. Բ. Կորն. Գործակիցք եմք ձեր. Զ. գլ. 1
հմր. վերջ, Լծակիցք անհաւատից. 14 հմր: ալէ. Քահա-
նայք քո: Աւետ. Մատթ. Ճժթ. Յայնժամ մատուցաւ.
ԺԲ. գլ. 22 հմր. վերջ, և մի ի հանդերձելումն. 32 հմր:

Իսկ յերեկոյին, Հմք. դկ. Բանն որ ընդ հօր: Եւ քար-
շեալ զվարագոյրն՝ ծածկեսցեն զսեղանն, յօրինակ ար-
տաքսման Աղամայ ի գրախտէն, և ոչ համբուրեսցեն այ-
սուչետեւ զաւետարանն. նաև ոչ բարձրացուսցեն ի հա-
ւատամքին և ի կեցոյին՝ ի տես ժողովրդեանն. զլոյս զու-
արթն ևս թիւ ասացցեն ի տեղի մաղթանքին, մինչև ի
ծաղկազարդն:

Արուն բարեկենդանի Կիւրակէին՝ փոխեա՞ զձայնն և
արա վերջ, դկ. բայց առաջին կանոնն՝ Խոստովաննէ,
և յետին կանոնն՝ ի նեղութեանն: Կանոնագլուխ. Օրհ-
նեա անձն իմ զտէր. օրչնեցից զտէր ի կեանս իմ. սաղ-
մոս ասացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես. (Զիւխն Ակ- լան
ասա: Լ է լիլ Յայնի-), Օրչնեցից ըն քեզ գոհութեա՞ մը
ի կեանս իմ, սաղմոս ասացից քեզ Քրիստոս ժագաւոր
յաղթական նոր Երգով օրչնութեամբ. (Երկու կրինեա): Ակ-
Օրչնեցիք զտէր՝ զի բարի է սաղմոս. Աստուծոյ մերում
քաղցր եղիցի օրչնութիւն. (Ակոխն լան ասա: յետոյ Յայնի-)

Քաղցրաց սցիսն քեզ Քրիստոս գոհութելունք Երկիւղած-
ծաց անուան քոյ. զոր յուսացուցելու ողորմութեամբ
քով ի խորհուրդը կենսաբեր գալստեանդ քու (Երես
էրնետ): Այս, Գովեա Երուսաղէմ զտէր. (պիտի լաւ ասա):
յետոյ Յայնի-, Զքեզ Քրիստոս գովէ Եկեղեցի փըրկեալ
քո սուրբ. ցը ծալով տեսանէլ ըզ քեզ ըզ փըրկօղդ Եկեալ
Հայրական իշխանութեամբ, ի պատկել ըզ սուրբը քու.
(Երես էրնետ): Ապա Այսօր անձառ: Սաղմ. Նշանեցաւ:
Աւետ. Խաչելութեան. և Երգ ի նորոգողէն մէկ փոխ, և
ապա հոգւոց: (պէտ պահոց՝ հանգստան շարական Աստուա-
ծանել ու Քոյ): ահ. դկ. Բանն որ ընդ Տօր. իւր սարօքն:
Եղաբերից Աւետ. Մատթ. յիւր. Եւիբրե Երեկոյ Եղեւ. Իէ.
Գլ. 57 հմր. վերջ, հանդէպ գերեզմանին. 61 հմր: (ի պահոց
էրնետին, զիւլիսէրէց աւետարանն զնապանն միայն կարդա):
Զինէ լայս ասա Երեւ անգամ. Զամենայն աւուրս կենաց իմոց,
ես ոչ դադարեցայց օրհնել զքեզ Քրիստոս փրկիչդ աշ-
